Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն

2019

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանություն

Հայաստանը, որպես կարևոր գործընկեր Կովկասյան տարածաշրջանում, Ճապոնիայի հետ կիսում է այնպիսի համընդհանուր արժեքներ, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը, մարդու հիմնական իրավունքները, օրենքի գերակայությունը և շուկայական տնտեսությունը: Հատկանշական է, որ 2018 թվականի ապրիլյան թավշյա հեղափոխությունից հետո հայ ժողովուրդը ընտրեց երկրի քաղաքական և տնտեսական բարեփոխումների ուղին:

Աջակցության հիմնական քաղաքականությունը

Հավասարակշռված և կայուն տնտեսական աճի ապահովում

Նման հավակնոտ և ապագային ուղղված վերափոխումներին աջակցելու նպատակով՝ զբաղվածության աճի, մարդկային կապիտալի զարգացման, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման, ինչպես նաև հանրային և պետական կառավարման արդիականացման միջոցով, Ճապոնիան, ի թիվս բազմաթիվ այլ տարրերի, մտադիր է կենտրոնանալ այնպիսի բնագավառների վրա, ինչպիսիք են՝ ինստիտուտների և ենթակառուցվածքների բարելավումը, մարդկային ռեսուրսների զարգացումը, ինչպես նաև աղետների կանխարգելմանն ուղղված միջոցների շարունակական կատարելագործումը՝ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում:

Գերակա ոլորտներ

Տնտեսական աճի ապահովմանն ու տարածաշրջանային զարգացմանն ուղղված՝ ինստիտուտների, ենթակառուցվածքների բարելավում և մարդկային ռեսուրսների զարգացում

Հայաստանում գյուղական համայնքների մեծ մասը գտնվում է լեռնային շրջաններում՝ դժվար հասանելիությամբ և տրանսպորտային ենթակառուցվածքների բացակայությամբ: Գյուղատնտեսությունը, որը այդ տարածքների հիմնական արդյունաբերական ճյուղն է, ունի ցածր արտադրողականություն, իսկ գյուղատնտեսությունից բացի ոչ մի այլ խոշոր արդյունաբերական ոլորտ զարգացած չէ: Շրջաններում տնտեսությունը խթանելու և տարածաշրջանային զարգացման անհավասարությունները նվազեցնելու նպատակով՝ Ճապոնիան կաջակցի հիմնական ենթակառուցվածքների՝ էլեկտրական ցանցերի, բժշկական և առողջապահական ծառայությունների, ինչպես նաև ուսումնական հաստատությունների հետագա բարելավմանը: Բացի այդ, Ճապոնիան օժանդակություն կտրամադրի մարդկային ռեսուրսների զարգացման գործում՝ փոքր և միջին ձեռնարկությունների (ներառյալ ՏՏ ոլորտի) առաջխաղացման և տարածաշրջանային զարգացման անհավասարությունները նվազեցնելու նպատակով:

Աղետների կանխարգելմանն ուղղված միջոցների ուժեղացում

Հայաստանը, ինչպես նաև Ճապոնիան, պատմականորեն ենթարկվել են տարբեր բնական աղետների՝ հատկապես ավերիչ երկրաշարժերի: Ճապոնիան իր պարտքն է համարում աղետների կանխման և մեղմացման ոլորտում կիսվել սեփական փորձով և տեխնոլոգիաներով Կովկասում այս երկրի հետ, ինչպես նաև զարգացնել մարդկային ռեսուրսները և առավելագույնս ուժեղացնել այդպիսի աղետների նկատմամբ երկրի բնականոն տոկունությունը:

Ճապոնիայից Հայաստանին ուղղված Զարգացման պաշտոնական աջակցության (ԶՊԱ) ընթացիկ տեսակները

ԶՊԱ ՎԱՐԿԵՐ

ցածր տոկոսադրույքով, երկարաժամկետ և արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում՝ տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների լայնամասշտաբ զարգացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացմանն աջակցելու նպատակով:

ԸՆԴԱՄԵՆԸ **31,808,000,000** ճապ. իեն
284,000,000 ԱՄՆ դոլար

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

իրականացվում է տնտեսական և սոցիալական զարգացման տարատեսակ որոշակի ոլորտներում անհրաժեշտ տեխնոլոգիաների փոխանցման նպատակով: իրականացվում է տնտեսական և սոցիալական զարգացման տարատեսակ որոշակի ոլորտներում անհրաժեշտ տեխնոլոգիաների փոխանցման նպատակով:

ԸՆԴԱՄԵՆԸ **4,567,000,000** ճապ. իեն
40,776,785 ԱՄՆ դոլար

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

նվիրատվության ձև է, որը չի պահանջում ստացող երկրի կողմից մարման որևէ պարտավորություն

- Մարդկային անվտանգության «Grassroots» դրամաշնորհային ծրագիր
- «Grassroots» մշակութային դրամաշնորհային ծրագիր
- Ընդհանուր դրամաշնորհային ծրագիր
- Մշակութային դրամաշնորհային աջակցություն
- Ոչ-ծրագրային դրամաշնորհային աջակցություն

ԸՆԴԱՄԵՆԸ **9,124,000,000** ճապ. իեն
81,464,285 ԱՄՆ դոլար

* Ընդհանուր գումարը մինչև 2018թ. ֆինանսական տարին
* Պաշտոնական փոխարժեքը 2018թ.-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար = 112 ճապոնական իեն

Ամասիա համայնքում կենցաղային խնամքի ծառայություններ տարեցների համար ծրագիր
3,176,910 ճապոնական իեն
(28,881 ԱՄՆ դոլար), 2018

Հայաստանի Հանրապետությունում ականների վտանգի մասին իրազեկմանն ուղղված աջակցության ծրագիր
10,184,900 ճապոնական իեն
(92,590 ԱՄՆ դոլար), 2016

Սպիտակ քաղաքի թիվ 8 դպրոցում ջեռուցման համակարգի բարելավման ծրագիր
9,129,120 ճապոնական իեն
(82,992 ԱՄՆ դոլար), 2018

Իջևանում բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոնի կառուցման ծրագիր
7,665,056 ճապոնական իեն
(68,438 ԱՄՆ դոլար), 2018



Երևան քաղաքում հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագիր
881,000,000 ճապոնական իեն
(8,810,000 ԱՄՆ դոլար), 2009

Դիտակ համայնքում դպրոցի վերանորոգման ծրագիր
9,776,000 ճապոնական իեն (104,000 ԱՄՆ դոլար), 2010
9,692,430 ճապոնական իեն (88,113 ԱՄՆ դոլար), 2015



Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի ծրագիր, 2005, 2008
10,491,000,000 ճապոնական իեն, 2005
15,918,000,000 ճապոնական իեն, 2008

Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի համար պատմական փաստաթղթերի պահպանման նպատակով սարքավորումների տրամադրման ծրագիր, 2001
49,300,000 ճապ. իեն

Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի համար պատմական փաստաթղթերի պահպանման նպատակով սարքավորումների տրամադրման ծրագրի հետևողական իրականացման համար աջակցություն, 2008
2,724,144 ճապոնական իեն (23,484 ԱՄՆ դոլար), 2008

ՄԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Ստեփանավանի թիվ 6 միջնակարգ դպրոցին
դպրոցական ավտոբուսի տրամադրման ծրագիր
2,352,000 ճապոնական իեն
(21,000 ԱՄՆ դոլար), 2018



ՀՀ Կոտայքի և Լոռու մարզերում
երեխաների համար նախատեսված
խաղահրապարակների
բարեկարգման ծրագիր
4,924,480 ճապոնական իեն
(44,768 ԱՄՆ դոլար), 2018

Մոր և մանկան առողջության
պահպանման ծառայությունների
բարելավման ծրագիր Ճամբարակում
9,401,218 ճապոնական իեն
(114,649 ԱՄՆ դոլար), 2013

Սիրիահայ փախստականների աջակցման
և աշխատատեղերի ստեղծման
նպատակով Երևանում խոհանոց-
կենտրոնի ստեղծման ծրագիր
4,469,850 ճապոնական իեն
(40,635 ԱՄՆ դոլար), 2018

Հայ-ռուսական (Սլավոնական)
համալսարանում ճապոներեն լեզվի
ուսումնասիրման համար
պայմանների բարելավման ծրագիր
3,743,640 ճապոնական իեն
(31,197 ԱՄՆ դոլար), 2017



Տեղական արտադրանքի զարգացման և տեղական
ապրանքանիշերի առաջխաղացման ծրագիր
236,000,000 ճապոնական իեն, 2013-2016
262,000,000 ճապոնական իեն, 2016-2019
բոլոր մարզերում

Ⓖ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրեր
Ⓖ Մշակութային «Grassroots» ծրագրեր
Ⓐ Դրամաշնորհային աջակցություն
Ⓣ Տեխնիկական աջակցություն
Ⓛ ՀՊԱ վարկեր
Ⓘ Ճապոնիայի ֆինանսական աջակցությունը միջազգային կազմակերպությունների միջոցով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Ճգնաժամային հաղորդակցության բարելավման և աղետների ռիսկերի նվազեցման հանրային իրազեկման ծրագիր, **2019-2022**
- Սողանքների կառավարման ծրագիր, **2014-2017**
- Տեղական արտադրանքի զարգացման և տեղական ապրանքանիշերի առաջխաղացման ծրագիր, **2013-2019**
- Սեյսմիկ ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման պլանավորման ծրագիր, **2010-2012**
- ՓՄՁ-ի մարդկային ռեսուրսների զարգացման ծրագիր, **2005-2008**
- Մոր և մանկան առողջության / վերարտադրողական առողջության ծրագիր, **2004-2006**
- Սողանքներից տուժած համայնքների զարգացում, **2004-2006**

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Հրշեջ սարքավորումների բարելավման ծրագիր, **2017**
- «Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագիր» ոչ-ծրագրային դրամաշնորհային աջակցություն, **2016**
- Երևան քաղաքում հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագիր, **2009**
- Հայաստանի Հանրապետությունում մանկաբարձական ծառայությունների բարելավման ծրագիր, **2005**
- Բժշկական սարքավորումների վերազինման ծրագիր, **2001**
- «Արմենիա» բժշկական կենտրոնի բժշկական սարքավորումների վերազինման ծրագիր, **2000**
- «Աջակցություն գյուղատնտեսական ցանկապատի, տպագրական
- թղթի, տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար» ոչ-ծրագրային դրամաշնորհային աջակցություն, **1997**
- Գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի ձեռքբերման աջակցություն, **1997 - 2009**

ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտական արվեստի վերականգնման և պահպանման համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագիր, **2018**
- Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագիր, **2017**
- Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուների վերականգնման համար սարքավորումների վերազինման ծրագիր, **2009**
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համար երաժշտական գործիքների բարելավման ծրագիր, **2008**
- Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի համար ձայնային սարքավորումների տրամադրման ծրագիր, **2004**
- Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի համար ձայնային սարքավորումների տրամադրման ծրագիր, **2003**
- Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի համար պատմական փաստաթղթերի պահպանման նպատակով սարքավորումների տրամադրման ծրագիր, **2001**
- (Հաջորդել է «Grassroots» մշակութային դրամաշնորհային աջակցություն «Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի համար պատմական փաստաթղթերի պահպանման նպատակով սարքավորումների տրամադրման ծրագրի» հետևողական իրականացման համար, **2008**)
- Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համար երաժշտական գործիքների և ձայնային սարքավորումների տրամադրման ծրագիր, **1999**

Դրամաշնորհային աջակցություն Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար (GGP)

Արտացոլելով Ճապոնիայի կառավարության «Մարդկային անվտանգություն» հայեցակարգը իրականացնելու հանձնառությունը՝ GGP ծրագիրը նպատակ ունի աջակցելու տարբեր ոլորտների բարելավմանը, ներառյալ կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև այլ բնագավառների: GGP-ի հիմնական նպատակը մարդկային անվտանգության հայեցակարգի հիման վրա մարդկանց անվտանգության բարելավումն է: 2019-ի մարտի դրությամբ Հայաստանում Ճապոնիայի դեսպանատունը աջակցել է ընդհանուր առմամբ 64 GGP ծրագրերի իրականացմանը:

ԻՐԱՎԱՍՈՒ ԾԱՀԱՌՈՒՆԵՐ

Հայաստանում տեղակայված հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ), ոչ առևտրային կազմակերպությունները, ամայնքապետարանները, ուսումնական հաստատությունները, գիտահետազոտական և բժշկական հաստատությունները կարող են դիմել GGP ծրագրին: Ծահառուն պետք է ունենա առնվազն 3 տարվա գործունեություն՝ կայուն ֆինանսական կարգավիճակով: Ծրագրի ոլորտները ներառում են կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների զարգացման և այլ ոլորտներ:

Դրամաշնորհային ծրագրի գումարը, ընդհանուր առմամբ, **չի կարող գերազանցել 10,000,000 ճապոնական իենը (մոտավորապես 90,900 ԱՄՆ դոլար 2019 ֆինանսական տարում)** և ծրագրի տևողությունը պետք է լինի ոչ ավել քան 12 ամիս: Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերեն լեզվով:
Նախքան embjp@yv.mofa.go.jp էլեկտրոնային փոստին հայտաձևը ուղարկելը, դիմորդը ուշադիր կարող է կարդալ մեր կայքում ներկայացված ուղեցույցը և ծրագիրը ներկայացնող փաստաթղթերը՝ **https://www.am.emb-japan.go.jp/itpr_en/b_000195.html.**

Վերապատրաստման դասընթացներ

JICA դասընթացներ

1993 թվականից մինչև 2017 թվականը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին Հայաստանի Հանրապետությունից մասնակցել է **678 հոգի**՝ կառավարման, հանրային ծառայության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, էներգետիկայի, առևտրի, զբոսաշրջության, մարդկային ռեսուրսների կառավարման, բժշկական ծառայությունների և առողջապահության, սոցիալական ծառայությունների և այլ ոլորտներում:

Մշակութային դասընթացներ / սեմինարներ

- Թանգարանների և համայնքների զարգացման դասընթացներ, **2015-2016**
- Մշակութային զբոսաշրջության զարգացման նպատակով՝ պատմական քաղաքների պահպանման և ռիսկերի կառավարման դասընթացներ, **2014**
- Ընդհանուր թանգարանագիտության դասընթացներ, **2013**
- Հայաստանի պատմության թանգարանի խնդրանքով մշակութային արժեքների՝ հնագիտական մասունքների և էթնիկ նյութերի պահպանմանն և վերականգնմանն ուղղված սեմինարներ (դասախոսություններ և գործնական ուսուցում), **2011-2014**

Հայաստանի երկրաշարժի և Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված արարողություն

Ամեն տարի Սպիտակ քաղաքում, որը տեղակայված է Հայաստանի հյուսիսում, անցկացվում է Հայաստանի 1988թ.-ի երկրաշարժի և Արևելյան Ճապոնիայի 2011թ.-ի Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված արարողություն:

2018թ.-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ հիշատակի արարողություն՝ 1988թ.-ի Սպիտակի աղետալի երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ: Արարողությանը ներկա են գտնվել դեսպան Յամադան, ինչպես նաև Հայաստանում դիվանագիտական առաքելությունների այլ ներկայացուցիչներ, ՀՀ արտակարգ իրավիճակների փոխնախարար պարոն Արա Նազարյանը, Սպիտակի քաղաքապետ պարոն Սահակյանը, Սպիտակ քաղաքի փրկարարական ծառայության պետ, փոխգնդապետ պարոն Գաբրիելյանը, բազմաթիվ քաղաքացիներ և Փրկարարական ծառայության աշխատակիցները: Արարողության ընթացքում մատուցվել է հայ եկեղեցու պատարագ, որին մասնակցել են հարյուրավոր քաղաքացիներ և հարգանքի տուրք մատուցել՝ ծաղիկներ դնելով հիշատակի խաչքարերի մոտ:

Արարողությանը հաջորդել է Սպիտակի մշակույթի տան երաժշտական դահլիճում տեղի ունեցած համերգը: Միջոցառման ժամանակ դեսպան Յամադան ցավակցություն է հայտնել Սպիտակի երկրաշարժի զոհերի ընտանիքին և հարազատներին և համոզմունք հայտնել, որ Ճապոնիան կշարունակի զարգացնել և ամրապնդել երկկողմ հարաբերությունները Հայաստանի կառավարության հետ, քանի որ երկու երկրները դիմագրավել են տարբեր բնական աղետների: Բացի այդ, դեսպանը երախտագիտություն է հայտնել Սպիտակում Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժին նվիրված խաչքար տեղադրելու համար, ինչպես նաև հայ ժողովրդի արժեքավոր օգնության համար երկրաշարժից տուժած ճապոնացիներին:

2019թ.-ի մարտի 11-ին Սպիտակ քաղաքում տեղի ունեցավ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված արարողություն: Արարողությանը ներկա էին դեսպան Յամադան, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Ֆելիքս Ցոլակյանը, Լոռու մարզպետ պարոն Անդրեյ Ղուկասյանը, Սպիտակի քաղաքապետ պարոն Գագիկ Սահակյանը, Սպիտակ քաղաքի փրկարարական ծառայության պետ, փոխգնդապետ պարոն Սերոբ Գաբրիելյանը (ում նախաձեռնությամբ տեղադրվել է վերոնշյալ խաչքարը), բազմաթիվ քաղաքացիներ և Փրկարարական ծառայության աշխատակիցները: Ներկաները երկրաշարժի զոհերին հարգանքի տուրք մատուցեցին՝ ծաղիկներ դնելով հիշատակի խաչքարերի մոտ:

東日本大震災による犠牲者のために
ՃԱՊՈՆԻԱՅԻ
ՅՈՒՆԱՄԻՒ
ԶՈՀԵՐԻ
ԻՐՑԱՅԱԿԻՆ

Ճապոնիայի ֆինանսական աջակցությունը միջազգային կազմակերպությունների միջոցով

Համաշխարհային բանկի (ՀԲ) միջոցով
Գյուղատնտեսության քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագիր, որը ֆինանսավորվում է Ճապոնիայի Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի ծրագրով, **2017-2019**
Հայաստանի աղետների ռիսկերի կառավարման ազգային ծրագիր, **2015-2017**
Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ Հայաստանում աղքատների և խոցելի անձանց ձայնի և կենսապահովման հզորացման ծրագիր, **2013-2016**

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջոցով
Հանրային ծառայությունների բարելավման նպատակով՝ կառավարության և քաղաքացիական հասարակության համագործակցության ամրապնդումը բաց կառավարության գործընկերության շրջանակներում, որը ֆինանսավորվել է Աղքատության կրճատման ճապոնական հիմնադրամի կողմից, **2016 - 2018**
Աղքատության կրճատման ճապոնական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ հեռավոր և փոքր համայնքների համար կոշտ թափոնների կառավարման ծրագիր, **2015-2017**

ՄԱԿ-ի Ծրջակա միջավայրի ծրագրի (ՄԱԾՄԾ) միջոցով
«Արևային էներգիան՝ ի նպաստ ածխածնի ցածր արտանետումներով կայուն կենսակերպի՝ Հայաստանի Սոլակ, Այգավան և Մալիշկա համայնքներում» ծրագիր, որը ֆինանսավորվել է 10-ամյա շրջանակային ծրագրի Թրասթ հիմնադրամի միջոցով, **2017-2018**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջոցով
Հայաստանում ընտրական գործընթացների աջակցության ծրագիր, **2019-2020**

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես միշտ մտածել եմ, որ Հայաստանի և Ճապոնիայի ժողովուրդները շատ ընդհանուր հատկանիշներ ունեն, բայց մարդկային հաստատակամությունից և կամքից բացի ոչինչ չօգտագործելով, առանց արտաքին ռեսուրսների վրա հենվելու նոր արժեքներ «կերտելու» ունակությունը մարմնավորում է ամենակարևոր կողմը, որը համամարդկային նշանակություն ունի ոչ միայն մեր երկու ազգերի համար:

Հայաստանի համար 2018 թվականը արտառոց էր նույնիսկ իր դարերից եկող երկար պատմության համատեքստում: Խաղաղ անցումը, որը տեղի ունեցավ գարնանը, գրավեց ողջ աշխարհի ուշադրությունը: Այդ տարի իր 2800-ամյակը տոնած Երևանն իր բեմը տրամադրեց այդ փոփոխության համար: Իմ կարծիքով, սա ևս մեկ անգամ հաստատում է հայ ժողովրդի առանձնահատուկ բնույթը, որը միևնույն ժամանակ «հնագույն» և «ծայրահեղ ժամանակակից» է:

Այսօր մեր աշխարհը արագորեն փոքրանում է տեխնոլոգիայի քվանտային առաջընթացի շնորհիվ, որում հայ ժողովուրդը ցուցադրում է իր տաղանդի լավագույն կողմը: Ի վերջո, այս մոլորակի բոլոր երկրները և մարդիկ կդառնան «անմիջական հարևաններ»: Այդպիսի դարաշրջանի մուտքը կանխազգալով՝ մենք օրեցօր ձգտում ենք, որպեսզի Ճապոնիան և Հայաստանը դառնան ամենաջերմ հարևաններ այդտեղ:

Ջուն ՅԱՄԱԴԱ
ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան

From
the People of Japan

Ճապոնիայի
Դեսպանություն

Կոնտակտային տեղեկատվություն

Հասցե՝ Հայաստան, 0037, Երևան
Բաբայան փող., 23/4 շենք
(Արաբկիր վարչ. շրջան)

+374 11 52 30 10
embjp@yv.mofa.go.jp